



ԱՐՁԱՆ ՇԻՐՄԻ

ՅԱՒԷՐԺԱՅԻՇԱՏԱԿ ԲԱԶՄԵՐԱԽՏԻ

ՏԵԱՌՆ ԵՂՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻԻԶ

ԱՐԲԵՊԻՄԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

ՈՐ ԳԵՐԱՊԱՅԾՈՒ ՓԱՅԼԵԱԼ

ԻՅՐԵԻ ԸՆԴ ՈՒԹԵԱԿ ՏԱՍԱՆՑ ԱՄԱԹԻՒՍ

ԲԱՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ՕՐԻՆԱԿ ԵՒ ԹԱՐԳՄԱՆ

ՓՈԽՑԱԻ ՅԱՆԹԱՐԳՄԱՆԵԼՆ

Ի 26 ՀՈԿՏ · 1876

Մի 'ի սակաւերեւեաց անտի անձանց' որոց, եթէ չիցէ ժպրհութիւն ասել, թերութիւն է ծնանելն երկրաւոր և ոչ անդստին ընդ յարազուարճան յօդանալ գերակայս, հանգոյն լապտերի կազմելոյ յաստուածազանից իւղե- փեցաց խնկախառնից, 'ի տաճարի սրբութեան և իմաստութեան լուցելոյ յելս անցելոյ դարուն (1799), յետ ընդ երկար անաղօտ պայծառութեան՝ յանհրաժարելին հասեալ սպառուած, շիջաւ յաւուրքս (25-6 հոկտեմ. 1876) Տէր ԵԴՈՒԱՐԴ ՆԻՒՐՄԻԻԶ վարդապետ Մխիթարեան Արք- եպիսկոպոս (անուանեալ) Շիրակայ. անշիջանելիս թողլով յիշատակս, զանուշութիւն վարուցն՝ 'ի սիրտս ծանութից իւրոց, և զգրաւոր վաստակսն՝ 'ի հայկական դպրութեան՝ յայժմուս և յապագայն. քանզի որպէս անմահ է սրբութիւն յերկինս, անմահանայ և յերկրի իմաստութիւն, մանաւանդ որ անմահավայելն բարբառով աւանդիցի, այսինքն է ներդաշնակութեամբ, որպէս վկայեցին խորիմացքն բանասէրք հինք և նորք : Զիք ինձ առձեռն- պատրաստ բառ կամ բան յանկազոյն առ միահաղոյն բովանդակել զսե- փական տիպս կամ դպատուկս բնութեան այսր Անձին՝ քան զայս ներդաշ- նակութիւն. զուգաւորութիւն ասեմ բազմազան շնորհաց անուշից ըստ երկնաւոր և երկրաւոր հանգամանաց. քանզի իբրու անդստին յընծայու- թեւէն 'ի լոյս կենաց, պէս գունակ հիլլենացի գեղաբանին՝ 'ի վեհից ս- մանց քաղցրագործակ մեղուաց օժեալ և բուծեալ, ամենայն տարազու բերէր և բուրէր զքաղցրութիւն. 'ի կերպարանս և 'ի ձայն, 'ի զրոյցս, 'ի կե-

նակցութեան, 'ի շարամանութեան հայկական լեզուիս յարձակն բան և 'ի չափական, 'ի սիրտ գորովական և մարդասէր, և 'ի հոգի եռանդուն և աստուածասէր. վերագոյն քան զհասարակն կամ զմիջակ ունելով հանճար ծննդական, և քաջառու գեղեցիկն՝ ոչ միայն 'ի դպրութիւնս կամ 'ի բանաստեղծութեան, որպէս բազմաց է յայտ, այլ և 'ի ծանօթութեան և յընտրութեան այլոց ևս նրբից գեղարուեստից, որպէս պատկերահանութիւն, ճարտարագետութիւն, ծաղկադարմանութիւն, և որ սոցին նման գեղանի ծնունդք բնութեան, հանճարոյ և շնորհաց:

Թերևս ոչ դիւրահազը կամ հաւանելիք թուիցին այս բանք՝ որոց չիցէ ընդ նմա ծանօթացեալ և կենակից լիալ. իսկ ծանօթիցն՝ դիպողադոյն ևս իցէ սխրանալ ընդ նա 'ի յիշեն՝ քան եթէ մանրախուզիս քննել զվարս նորին և զգործս. զի չիք կարծեմ որ շատ կամ սակաւ կենակից խօսակից ևղև նմին՝ և ոչ հաճեցաւ ընդ նա, կամ ոչ սքանչացաւ ընդ ականակիտ պարզութիւն սրտին, իբրև ընդ հայելոյ իմիք՝ 'ի վերին երեսս զմանկաւ կանն ունելով ապակեփայլ պաղպաղ, ղծերունական խոհակնութիւն 'ի կռան: Ասաց ոմն կորովաբան, որ և չէր համամիտ նմա և հաւան, եթէ սատանայի միայն հնար է հակառակել Տեառն Եղուարդայ. և արդարև պատրանք դիւականք համարեսցին՝ եթէ հակառակեաց ինչ որ նմա, այլ ևս վստահ եմ թէ ինքն Տէրն Եղուարդ ոչ ումեք հակառակեցաւ. և եթէ 'ի չփոթս յետին ամացս յազգային և կրօնական խնդիրս, յորս հրեշտակք անգամ կարծեմ այլ ընդ այլոց երևեցան, եթէ որ և զայսպիսի անձն ոչ միայն փոքրողի գրեաց՝ այլ իշխեաց և առ առակէ կերպարանել, սա և յայնժամ՝ իրազեկ լեալ՝ միայն զաչան 'ի վեր ամբարձեալ՝ մաղթէր այսպաւ. նողացն ներումն և օրհնութիւն. որում և մեք ցանկամք հանդիպել նոցա:

Առած է կարծեցելոց բարոյախօսից՝ զլուութիւն անջան առաքինութիւն անուանել. այսպէս թուի ոմանց և հեզութիւնն և անուշաբարոյ. յութիւն վարկպարագի և ընդարոյս տուրք բնութեան. սակայն եթէ հնար է այդմ այդպէս լինել 'ի մանկունս, այլ ոչ և յորս կատարեալս արգք և դործովք. եթէ դիւրագիւտ և դիւրահաս ինչ էր՝ ապա ոչ երանէր զայն և ոչ զինքն օրինակ վկայէր հեզութեան և խօնարհութեան՝ ամենեցուն Տէրն: Նոյն ինքն հանճար և աշխոյժք այսպիսեաց անձանց՝ յորոց և մերս Տէր Եղուարդ, յայտ առնեն, զի այնպէս վառ 'ի վառ սրտի անմարթ է այն. քան հեզանալ՝ եթէ ոչ մասն առաքինութեան կայցէ նմին ուղղեակ: Իսկ որ սովին գեղեցիկ և տեսաւնադրուատ առաքինութեամբ հանապաղ կեն. ցաղափարէր ընդ ամենեւին, մարթ ինչ էր նմա այլազգ ընդ բոլորեցուն Տեառնն վարել. — յայտ իսկ է զի ամենեին հլու և հնազանդ էր նորին կա մաց, եթէ յայտնեցելոցն բանիւ և հրամանաւ վեհագունից 'ի կարգի կրօ.

նաւորութեանն, յորում անստգիւտ քաղաքաւարեցաւ, առ կրսեւագոյնսն անգամ քան զինքն բազում ամօք և աստիճանօք խոնարհելով որպէս նո-
րեկ դը նորընծայ. և եթէ ուղղակի 'ի վերուստ հասեցոյն' 'ի ձեռն ար-
կածից և պատահարաց, որպիսիք եղեն նմա, — թողեալ զվիշտսն բարո-
յականս՝ զոր Առաքեալն թուէ Պօղոս, — երկիցս և երկցս վտանգք մահա-
բերք յուզւոյ՝ 'ի ծովու և 'ի ցամաքի, յորոց առանձինն իմն նախախնամու-
թեամբ զերծաւ, մինչ հզօրագոյնք յընկերակցացն անճողոպրելի վտանգե-
ցան, երկցս և տաժանակիր ցաւալլուկ խօթութիւնք, որովք 'ի դրունս օր-
հասի ժամանեալ և ընկալեալ զվերջին նպաստս կրօնից, դոգմիր սքան-
չելեօք իմն վերակենցաղեաց, և 'ի հուսկ նուազին՝ կարեօք և հասակաւ
ժանրացեալ 78ամենի զհասարակաց պարտսն վճարէր երկրի իբրեւ երկ-
րաւոր, այլ գեր քան զհասարակաց բարեպաշտօրէն և աստուածասէր
յօժարութեամբ, յետ վեցից լոկ ամսոց նմանօրինակ կատարածի համա-
քատակ եղբօր իւրոյ երկցու և համապատուի աստիճանաւ եպիսկոպոսու-
թեան, Տեառն Գէորգեայ Աբբայի ուխտիս Մխիթարայ:

Ի կարգէ և 'ի հարկէ բանիս բերեալ յայս յետին յիշատակ, արդա-
րացի վարկանիմ չմոռնալ և զայն՝ զի յորժամ լռիցէ յախուռն և անպա-
րագէտ ներկայ, այլազգ նկատէ և բարբառի ողջախոհ ապագայ. մեծ ակն-
կալութիւն է թէ և մերոյ տոհմիս ցանկալի ապագայ՝ պատու և պարծանս
տաճարի կրօնից իւրոց և զպրութեանց համարիցի զերկուսին հարազատսն
Հիւրմիւզեան եպիսկոպոսունս, իբրեւ զոյդս սխրալիս, ոչ դիւրագիտոս և
դիւրամանեկիս. և եթէ ոչ դանդաղիցի նշմարել 'ի Տէր Եգուարդ զբաղց-
րաճաճանչ բարս և լեզու յատկանուանելոյն Շնորհալի, ոչ զլսացի և
Տեառն Գէորգեայ՝ զերկցու նորին հարազատի զվկայասէրն Գրիգորիսի՝
վանական ոգի և աստուածախօս բերան, հանդերձ խոհական ազգային
նախանձու, որով զբազումս գիտեմ արդ վառեալս և ջեռեալս, այլ դիմացն
և արդեանց անգիտանամ: — Խաղու արգեօք թուիցին ոմանց բանք՝ եթէ
ասացից, զի զարժանաւորութիւն այսպիսեաց զուգից ինքեանք իսկ քաջ
աղնուապէս ծանեան, մեծարելով յիրեար. քանզի համարիցին բնութեան
և արեան արգասիս՝ զմեծ վարկն և զմեծագոյն նոցա սէրն որ առ միմեանս.
այլ որոց զաստուածսիրութիւն և զառաքինութիւն նոցին քաջ նշմարեալ
իցէ՝ անհնար է չտեսանել և վերագոյն քան զբնութեան բերումն 'ի զոյգան
և հաւասար սիրողս և սիրելիս՝ յորոց ոմն ըստ վերոյ օրինակեալ հարա-
զատացն Պահլաւունաց՝ հրճուէր և խնդայր ընդ յառաջագիմութիւն և ընդ
պէս պէս տուրս նորհաց հանճարոյ եղբօրն կրսերոյ. և ոմն՝ արգագիր մե-
ծարանօք առ աւագն՝ որպէս առ հայր քան առ եղբայր, հաւասար այլոց
ուխտակցացն միաբանից՝ զառաջնորդականն պատուէր 'ի նմա կարգ և

պատիւ, ոչ ինչ նուազեալ յեղբայրական զթոյն: Աւելորդ իմն իցէ ինձ ապա յիշեցուցանել, եթէ ընդ բարձումն 'ի կենաց այնպիսւոյ եղբօր երկ-
ցագունի, չէր մարթ այլոյ ումիք այնքան սրտառուչ սրտաբախ լինել՝ որ-
քան կրօնորդն, թէ և սուղ հեռի կալով 'ի նորայն ալեօրեալ հասակէ, և
վաղու ևս ևստակիր. այլ նա և յայս գէպս եցոյց գեղեցկապէս՝ զկամս և
զկիրս արթուն և զուարթուն բնութեան՝ ստորագրել աստուածայնոց կա-
մաց, և 'ի նոյն ներակրթիլ, յաստուածունակ հոգւոյն զուարթութիւն խա-
զաղելով զխանդակաթ սղեացն գութ. և յորժամ յետ ամսոց սակաւոց
եղեալ գայր 'ի Հոռվմայ՝ յորբացեալ տունս Մխիթարայ, ծոմաջան տընու-
թեամբ պահեալ զյետին գիշերն և զվաղորդայն գալստեանն, լուրջ գիմօք
մատեաւ նախ ծնրադիր մաղթանօք 'ի համբոյր գերեզմանի հանգուցելոյ
Հարազատին, և անդէն իսկոյն յարուցեալ կատարէր անխռով և աստուած-
ազգեաց իմն զօրութեամբ զսուրբ խորհուրդ պատարագին 'ի յաւերժ հան-
գիստ նախընթացին իւրում. և յայնմ օրէ և առ յապա բնաւ ինչ ոչ խօ-
սեցաւ զպատահարէն, և ոչ այլայլեաց ոչ զդիմացն և ոչ զբանից զուար-
թակերպութիւն. մինչև եհաս և ինքեան հրամանն տեսառնակոյ. և որպէս
ծննդեամբ՝ միով իմն օթեվանաւ յետագայ գտաւ քան զեղբայրն աւագ,
նմանապէս և մահուամբն հուպ ընդ հուպ ժամանեալ առ նա. և զոր օրի-
նակ յաւազանէն կոչեցեալք էին զուգանունաբար Գերովբէ և Սերովբէ,
համարիմ՝ նոյնաբար և հրեշտակացեալս անանջատելի կցորդութեամբ
յանսպառ երանութիւնսն: Անդանօր, այդ, ակն ունիմ և հաւատամ զլրումն
վարձուց և բաստից զուգիցդ սիրելեաց և բնտրելեաց, փոխանակ յերկար
վաստակոցդ և տաժանելի կրից որ 'ի մարմնի և որ յոգւոյ, ըստ փշաբեր
բնութեան երկրիս. զի և այդ տուրք կամ հրամանք են առ 'ի վերուստ՝ 'ի
փորձ և 'ի հանդէս ընտրեցելոցն, որ առաքինօրէն համբերութեամբ տա-
նիցին, անխոտորդ 'ի նպատակէ խոհեմընթաց ասպարիզին:

Երկոտասանամեկ մեկնեալ էր Տեառնս Եղուարդայ 'ի հայրենի տա-
նէ (յոր յետ յիսուն ամաց վերադարձաւ 'ի տես նշխարեալ ազգականացն),
գիմել զհետ եղբօրն կանխեցելոյ՝ 'ի կայս մեծին Մխիթարայ. և վասն ժա-
մանակին ժխորման 'ի պատերազմական յուզմանց միապետեալ բռնակա-
լին փռանկաց, ոչ կարելով ընդ կարծոյ ճանապարհ ծովաչու լինել, եր-
կարածիք և բաղմալտանգ ուղեորութեամբ հատեալ անցեալ ընդ բարձրա-
կոհակ պատուարս Պալքան լեւանց, — յորում և մահու խանդացեալ մաքսէր
յընկերաց նորին, — եհաս ուր ուրեմն յընտրեալն սրբավայր. և հետեւելով
նախաժամանելոյ եղբօրն՝ փոյթ ընդ փոյթ անցանէր ընդ կրօնաւորական և
եկեղեցական աստիճանս, և քսանամեկ կատարեալ կնքէր քահանայա-
կան կարգաւ, յետ սակաւոց աւարտեալ և զուսմանցն հրահանգս: Ի տղա-

յութենէն և անդր զամս քսան միայն եկաց 'ի վանսն . և զատ յայլոց ինչ պաշտամանց ըստ վանական հրահանգաց, զայնքան ամս ինքն լինէր առաջին երգիչ դասուն, գեղեցիկ, զգայուն և ողորկ ձայնիւն ոչ միայն զլսելիս զուարճացուցեալ, այլ և հոգեխառն օծութեամբ շնչոյն զմայլեցուցեալ զսիրտս, և յարտասուս իսկ լուծեալ զմանս . և որպէս ձայն նորա լսողացն էր սիրելի, յոյժ սիրելի և ինքեան երաժշտականութիւնն կամ երգեցողութիւն, զորմէ և ցվախճան աւուրցն խօսէր անհատաբար ախորժակաւ, ոչ իսպառ և ծիրութեամբն խրթնացեալ 'ի բնատուր պարգեւէն : Զգայր անշուշտ 'ի դալար հասակէն՝ եթէ 'ի յաւերժական երգաբանութիւն սահմանեալ է որ 'ի նմա հոգինչ Նոյն հոգի կամ միտք՝ նմանօրինակ իմն շնորհօք օծին զնորա և զանյօդական ձայն բանաւոր, զշարակարգութիւն բանիցն ասեմ յարամանս բարբառ, զոր՝ որպէս ճարտար բրուտ զկան կակուղ լմելով՝ այնպէս ամօքեաց և հեշտալուր կարգեաց, և յինքնաստեղծ բանսն և 'ի թարգմանութիւնսն անբաւ, որպէս զի և ըստ այսմ ոչ փոքր և աննշան մասին՝ տինա և 'ի տիրազլուս, ոչ զանգիտեմ նոր մմն Շնորհալի գեղեցկագիր ասել զնա և ճարտար թարգմանիչ, և աստատին գոհութիւն երախտեաց մատուցանել նմա 'ի դիմաց դարուց ապառնեաց մերոց հայերէն դպրութեանց, նոցա թողեալ զիմ թերին ընուլ՝ որպէս ես կանխեմ զնոցայն :

Ի բազմահատոր և յերկարաճառ Ռոլէնի Հնախօսութեան մատենիցն սկիզբն արարեալ թարգմանութեանցն (յորում գործակից և զհարազատն ունէր) մինչև իսպառ զամս յիսուն և աւելի և ցյետին հիւանդութիւնն՝ ոչ դադարեաց զրինչ դիւրագարձ, որպէս զի և լոկ ցանկ գրաւոր երկասիրութեանցն ոչ սակաւատող լիցի : Յերկուս 'ի հասարակի վերածին դասս, կամ յերիս շարագրութիւնք նորին՝ ինքնեակքն և թարգմանածոյք, 'ի գեղանի դպրութիւնս և 'ի հոգեկանս, սուղ ինչ և 'ի քերականականս . յառաջնոցն կարգէ են արդ իսկ յիշեցեալ Ռոլէնք վեց հատորք ստուարք, Պարթէլմեայ Ռոլէնքորոյն Անաքարսեայ վեց միջակ հատորք, Ենեակսն և Հովնաթանք վիրգիլիոսի կրկին թարգմանութեամբ 'ի յանգաւոր և յանյանգ չափս հայկականս, Տարեգիրք Տակիտոսի, Տեղեմաքն Ֆենեկոնի, Խօսեցեալքն Մանցոնեայ, Կրօնք Կրսեւոյն Ռասինի և փեղր երիցուն, Պօղ և Վիրգիլիա Սէն-Բիէրի, Թատրերգք Մեդապագիոյ, Նուսմա-Պոմպիլ Ֆլորիանու, Աքսորակսնք Սիպերիոյ և Բելիսար Կողգին և Ժանյիս սիկնայց, Թուրքք կամ Խրատք Մարկ-Աւրել կայսեր, և այլն, և այլն : Իսկ ինքն նաստեղծ երկասիրութեանց գեղաբանից նախադասական են Բուրաւառանքն անուանեալք Վրոշի Ռոմըղանայ (զի զայս ընտրեալ էր իւր բանաստեղծական անուն՝ ըստ ակադեմեայցն սարասի), ընդ որ և մեծ քեր-

դողն Բագրատունի վարժապետ նորին՝ հաճէր և գովէր. Մաղարուքն չափաւ, Առակք, Յարաւուրքիւնք 'ի Յովբ, 'ի Սաղմոսս և յՈրհնութիւնս մարգարէականս, և բազում քերդոռաճք մանուկք, որպէս գոհարք նկունք քանակաւ այլ յարգոյք որակաւ, յորս է նշմարել զնշոյլս նորախայծ հանճարոյն, և զանթարշամ ծաղկաբերութիւն ստեղծականին, զի և 'ի ծայրացեալ ծերութեանն չափաբանէր և ինքնայօրէն և թարգմանաբար: — Յերկրորդ դասուէն յիշեցին չորք հատորք Տեսական և Բարոյական Աստուածաբանութեան ըստ Բերոնէի և ըստ Ս. Լիկուորեայ, փիլոսոփ կամ Աստուածասէր Սալեզացոյն Ս. փրանկիսկեայ, հնգահատոր Հովիւ հոգևոր Տեսուն Բիանոյ, Հոյս սիրոյ Բինարոյ, և այլն. և յիւրմէն հոգեբոլիսեալ Ջրօսարան Տօնից: Դասեսցուք և յերրորդական ստորին կարգի զքերականականս՝ որ 'ի վարժս համբակաց, զորս բաղձայր յիւր արուեստն կրթել և օժանդակել, Բազգիրք աշխարհաբան և գրաբան, Դրոնք հայ, լատին և իտալ քերականութեանց, Համառօտ՝ ճարտասանութիւն, Արուեստ քերդոռաքեան, Դիյաբանութիւն, և այլն, և այլն: — Թողեալ և զայլ բաղմապատիկ գրուածսն 'ի մեր լեզուս՝ ոչ կամիմ զանց առնել և զոր յիտալական լեզու ճառս և խօսս, յոր յերկար բնակութեամբ 'ի մայր քաղաքացն 'ի Հռովմ՝ քալ վարժեալ էր, և յօղացեալ 'ի ճեմական կաճառս բանասիրաց և աստուածաբանից: — Վերջին երկասիրութիւն մատանցն և մօաց, մանաւանդ սրտին և հոգւոյն, յոր և պարապէր ջլետին մօտս 'ի մահիճ մահաւն՝ էր թարգմանութիւն ներքողինից մեծիմաստ և պերճախօս քարոզչացն փռանկաց՝ Պոսիւէի, Պուտալուի և Մասիլլոնի՝ 'ի տօնս Սրբոյ Կուսին, որում շնորհաւորէն պաշտօնատարն էր, և զոր Ուխտ իւր դաւանի Պահպանիչ ինքեան Որդեգրաց. և քան զոր չէր արդեօք մարթանկագոյն բողբոյլ պսակ Պսակին երկնից և երկրի՝ 'ի պսակման անդառաքինածաղիկ կենացն, աւանդելով և զինքն և զիւրն ինչ 'ի զիրկս ամենախնամն Մօր:

Այլքան և որ այլ ևս գրաւոր վաստակքն, յատկութիւն ոճոյ լեզուին և պատշաճ յեղափոխութիւնն 'ի լատին, յիտալ և 'ի փռանկ լեզուաց, ինքնին վկայք լինին և յաջողակութեան նորին և վարժիցն և անդուռ անխոնջ վաստակասէր երկայնամտութեանն. որով կարէր իրաւապէս ասել ընդ խորենացոյ ծերունոյն՝ անպարապ գոլ 'ի թարգմանութեանց. առ որ սովորութիւն արարեալ էր զկանխայարոյցն լինել 'ի քնոյ, և յետ հոգևորակա նին, եթէ այլ ինչ գործ պաշտաման չառնէր նմա հարկ, զօրն ամենայն առ գրասեղանին ծախէր, գրեալ է հանապազ գրելով քան ընթեռնելով. 'ի հանգիստ բնութեան զանհրաժեշտն միայն շնորհելով չափ ժամանակի: Այլ զարմանալի թերևս քան զյարատեութիւնն 'ի գրաւոր վաստակն՝

իյցէ և հասողութիւնն յարտաքին գործս, զորս իւրով սեփական չնորհա-
զարդութեամբն և մտողիւր խնամով կատարէր. յորս և գլխաւոր 'ի դէպ
է ասել զվերակացութիւն տանն Հայոց կամ Հիւրանոցի 'ի Հռովմ, որոյ
տեսուչ եկաց արքեպիսկոպոսութեան պատուով զամս երեսուն, և այլ ևս
ամս ոչ սակաւ յառաջագոյն օգնական լինելով նախորդին իւրոյ ծայրա-
զարդ ծերունւոյ Գ. Տեառն իզնատիոսի փափագեան. և ևս յառաջագոյն՝
գործակալ գլով Ուխտի իւրոյ Մխիթարեան Հարց. վասն այսորիկ զամս 44
եկեաց 'ի Հռովմ, և անդ հանգեաւ 'ի Տէր. խոհական և աշաւուրջ առաջ-
նորդութեամբ յաւելեալ յինուածս և կալուածս 'ի յիշեցեալ տունն Հայոց
և բազմապատկեալ զհասան, հոնպերձ բարեյարդար կարգօր, և վայելչա-
պէս պաշտելով զհանգիսական տօնս ազգային եկեղեցւոյն, ըստ ներելոյ
տեղոյն և թուոյ սպասաւորացն:

Երկարամեայ բնակութեամբն, և առաւել քան զայն բարեմոյն բա-
րուքն, և փութկոտ սրտալան ձեռնտուութեամբ, սպասաւորութեամբ մե-
ծի և փոքու, և մանաւանդ յետնոյ դասուս, ծանօթ և սիրելի եղև աւագաց
ուխտի եկեղեցւոյ կրօնամայր քաղաքին, և բազմաց յաշխարհիկ աւագո-
րերոյ, որպէս զի մի 'ի հնագոյն, ծանօթագոյն և արժանագոյն եպիսկոպո-
սաց տիեզերական քաղաքին ճանաչիւր. պատուասիրեալ 'ի ծիրանէկիր
կարդինալացն և 'ի Գլխոյ քահանայութեան, նախ 'ի Գրիգորէ ԺԶ և յետոյ
'ի Պիոսէ Թ, յորմէ և յետ եպիսկոպոսական բարձին (1847) ընկալեալ ե-
ղև յընթերակայութիւն Քահանայապետական դահուն, և յայլ ինչ պա-
տիւս, ունեւելով և զպաշտօն ձեռնադրութեան ազգայնոցն ընծայելոց 'ի քա-
հանայութիւն 'ի վարժարանի Հաւատասիրիւ. Ժողովոյն, և զերեսփոխա-
նութիւն հայածէս համակրօնիցն յաշխարհամուտ եկեղեցւոյ Քահանայա-
պետին: Հարկ պաշտամանն և մանաւանդ առ Աստուած պաշտօնասիրու-
թիւնն՝ ոչ միայն տայր նմա կանխել կամ կատարել զեկեղեցական հան-
դէսս, այլ բազում անգամ և հոգալ և արքնել և քրտնել 'ի հրահանգս հո-
գեւորս ուխտաւորաց ազգայնոց և այլոց արեւելեայց դիմելոց 'ի Հռովմ, 'ի
վարդապետութիւն քրիստոսական կրօնիցս, 'ի լուր խոստովանութեան, 'ի
հսկողութիւն 'ի վերայ Հիւրանոցին և բնակելոցն 'ի նմին, յորոց երբեմն և
ոչ փոքր նեղութիւն և վիշտ հասանէր նմա — Այլ առաւել քան զմերազ-
դիս օտարքն՝ որ և բնիկք Հռովմայ, վայելցցին և թախանձանգը իսկ 'ի հո-
գեւոր խնամս նորին, աշխարհիկք և կուսանք, զնա ընտրելով հայր խոստու-
վանութեան և պատրաստական և գորովական, փոյթ և յօժար 'ի մխիթա-
րել զհիւանդս հոգւով և մարմնով, զնեղեալս և զկարօտեալս, առ որս ըստ
կարի իւրում և առաւել քան զկար՝ երազահաս լինէր յօգնութիւն կա-
րևոր. և թէպէտ բազմաթիւ, որպէս յայտ է, են 'ի Հռովմ եպիսկոպոսունք

լատինք, այլ առաւել քան զյոգունս 'ի նոցանէ՝ մերս այս կոչեցեալ լինէր 'ի ժամու և 'ի տարաժամու տալ զկնիք զրոշմի մահու չափ ակտացելոցն եւ ըստայից, և բազում անգամ չեղեալ միտ իւրում իսկ խօթութեանն՝ փութայր անյապաղ 'ի կոչն:

Ի վերայ այսոցիկ ըստ իւրում զուարթ և ամենաշնորհ բարուց՝ ոչ միայն հոգեկանօքն պաշտէր զկարօտեալս՝ այլ և մարմնաւոր տրուք, և հիւրասիրութեան մեծարանօք, ըստ չափու և կարի իւրում առատացեալ, իւրով իսկ երբեմն ոչ միայն սպաս տանելով այլ և գործելով, և ախորժաւ լուր բանիւք և վիպօք առաւել ևս ախորժելի զխրախճանն յարգարելով. զի ջանելով և 'ի ծառայականս անգամ գործս, զի ընդ հոգեւորացն և զմարմնաւոր կամ զարտաքին գործս ողորմութեան կատարեսցէ, 'ի շինութիւն ամենեցուն և ըստ ամենայնի՝ Այլ և յառտնին տեսչութիւն բնակարանին և պարտիզակին՝ այնպէս գեղեցիկ իմն ճաշակաւ և ընտրութեամբ խնամ տանէր, ձեռօք իւրովք դարմանելով զծառս և զծաղկունս, որպէս թէ այնց միայն քաջահմուտ իցէ և ոչ հեղինակ տաղաչափող Բուրաստանացն, և գրիչ և թարգմանիչ այնքան մատենից, և ներկայ յաստուածային պաշտամունս՝ որ յեկեղեցիս հասարակաց և որ յիւրօրոյն առանձնութեանն սենեկի, յերկարելով յաղօթս և 'ի խոկմունս հոգեւորս, որք ընագոյնք և հնագոյնք էին նորա ճաշիք և զբօսանք, զորովք երբեք չառնէր զանց, գուցէ և ըստ չափ անխնայ անձին՝ 'ի խօթութեանն՝ նախակարգեալ ցուցակ աստուածախօս գրոցն յօրինելոց և թարգմանելոց առ 'ի նմանէ՝ ինքնին իսկ քարոզք են հոգեւէր ձեռնդեան նորին, իսկ կենդանի գործոցն բազում են վկայք զարմացողք. յորոց և 'ի հաւատարմէ միոյ զիտացի, զի լուեալ էր բազում անգամ և միշտ իսկ երբ մերձ 'ի սենեակ նորա գտանէր, զի 'ի մօտեւել նորա արտաքուստ 'ի սենեակն՝ հանապաղ իբրև վայրկեան մի աւելի կամ պակաս լայր կականմամբ. և ոչ երկբայէր լսողն՝ եթէ փղձկիցի նա 'ի տեսանելն կամ յողջունել զխաչեցելոյ Տեառն իւրոյ զպատկեր. յորմէ և զուշակէր բազում և այլ այսպիսի բարի բարի և ջերմեռանդն կատարել նորա ներգործութիւնս, զատ 'ի յայտնեացն, զաղտնիս և սրբտագիտին ամենեցուն ծանօթս. այն որ ըստ նոցին, և ըստ բազմազան գործոցն՝ — յորոց և զարտաքինսն անգամ հոգեւորական շնորհիւն չպարէր —, կշռեսցէ նմա զվարձսն հարիւրապատիկս և ամենապատիկս յօթեվանս սիրելեաց իւրոց. կարգելով զնա 'ի դաս՝ ուր գիտէն պատշաճել. առ Որ թողեալ պատկառանք իմ ներքեւելոյս զվերնոցն տնտեսութիւն և դասակարգութիւն, խրախուսեմ նշմարել զհետս գնացից Տեառն իմոյ և Հօր Եղուարդայ՝ ընդ շնորհաշաւիղ և ընդ սղաւնասլաց ճանապարհ՝ ընդ որ հուն և վերելս գործեցին կլայեցի, Սալեղացի և Ֆենելոն:

Abbiamo il dolore di annunziare l'amara perdita che fece la religiosa Congregazione de' Mechitaristi di Venezia, nella persona di S. E. R. Monsignor Edoardo D.r Hurmuz, suo rappresentante presso la Santa Sede, avvenuta la mattina del 26 Ottobre alle ore 3 antimeridiane.

Nacque in Costantinopoli il 30 gennajo dell'anno 1799; entrò nella Religione di Venezia l'anno 1812; ne vestì l'abito nel 1814; professò nel 1816; e fu ordinato sacerdote nel 1819. Percorse in breve i varii ufficii della sua Congregazione, e da ultimo ne fu creato nel 1837 procuratore presso la suddetta Santa Sede, al quale officio gli fu anche aggiunta posteriormente la amministrazione dei beni nazionali in Roma, della quale si rese sommanente benemerito.

La Santità di N. S. Papa Pio IX lo creò Arcivescovo di Sirace nel 1847, e fu consacrato il 19 ottobre dell'anno stesso. Fu uno dei cinque vescovi deputati a chiedere a nome dell'Orbe Cattolico alla detta Santità di Nostro Signore, il giorno 8 dicembre in S. Pietro, la proclamazione del dogma dell'Immacolata Concezione di Maria Vergine. L'anno appresso fu nominato assistente al Soglio Pontificio, e intervenne al Concilio Vaticano apertosi li 8 dicembre 1869.

Fu uomo di vita integerrima, di costumi mitissimi, di pietà insigne, e di dottrina non ordinaria. Consacrò quasi interamente la sua vita nell'esercizio dei suoi doveri religiosi e nello studio: tradusse in armeno per la educazione dei suoi nazionali moltissime opere, latine, italiane, e francesi, attinenti la maggior parte alla letteratura e alle scienze sacre, oltre a varie altre che furono frutto del colto suo ingegno.

La sua memoria perciò sarà ognora in benedizione in quanti il conobbero.

(Estratto dall'Osservatore Romano.)